



«05» 02 2014 թ

# ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԲՓ 05

Տրված է՝

**<<Արման Օձնեցի>> ՍՊԸ**  
«Լոռու մարզ, գ. Օձուն»

Գործունեությունը՝

**Կաճակուրի գրանհյոդիդների հանքավայրի  
/պլազհոգրանհյոդների տեղամաս/ շահագործման  
աշխատանքային նախագծի վերաբերյալ**  
«Լոռու մարզ»

Տնօրեն՝



Ա. Գևորգյան



ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 05

« 05 » 02 2014թ.

**«Արման Օձնեցի» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտի գրանիտոիդների հանքավայրի /պլազիոգրանիտների տեղամաս/ շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ**

Պատվիրատու՝	«Արման Օձնեցի» ՍՊԸ
Նախագծող՝	Հ. Կարապետյան
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ
Լիազորված անձ՝	Հ. Ավետիսյան
Տեղադրման վայրը՝	ՀՀ Լոռու մարզ, Կաճաճկուտ համայնք

Կաճաճկուտի գրանիտոիդների հանքավայրը գտնվում է Լոռու մարզի համանուն գյուղից 1.5-2.0կմ հարավ, Լալվար լեռան հարավային լանջին: Հանքավայրի հարևանությամբ անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղին:

Տարածաշրջանը բնութագրվում է տիպիկ լեռնային, խոր գետահովիտներով կտրտված ռելիեֆով: Հանքավայրն ունի հյուսիս-արևմտյան տարածում, հարում է Կաճաճկուտի ինտրուզիվ մարմնին: Գրանիտոիդները տարածված են ինտրուզիվ մարմնի հյուսիս-արևմտյան մասում, իսկ պլազիոգրանիտները՝ հարավ-արևելյանում: Ապարները մերկանում են գետափերի բլուրների վրա ու դրանց լանջերին: Հանքավայրի տեղամասերը գտնվում են 1050-1100մ և 1230-1310մ բարձրությունների վրա:

Կաճաճկուտի հանքավայրի գրանիտոիդների հաշվեկշռային պաշարները՝ 631.8 հազ.մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, C<sub>1</sub> կարգով հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության ՕՀՊԳ-ի կողմից 29.12.2005թ. թիվ 83 որոշմամբ՝ որպես հումք երեսպատման բլոկների արդյունահանման և ճարտարապետաշինարարական իրերի արտադրության համար: Շահագործման համար ընտրված է 1.23հա պլազիոգրանիտների տեղամասը, որի սահմաններում ներառված օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների ծավալը կազմում է 304.5հազ.մ<sup>3</sup>: Զարամշակման հումքից բլոկների ելքը հաստատված է 34%:

Համաձայն ներկայացված նախագծի հանքավայրը նախատեսվում է շահագործել երկու փուլով: Առաջին փուլի տարեկան արտադրողականությունը հաշվարկված է 5336մ<sup>3</sup> /ծառայման ժամկետն ընդունված է 25 տարի/, իսկ երկրորդ փուլինը՝ 5650մ<sup>3</sup>: Բացահանքի ծառայման ժամկետն ընդունվել է մինչև 50 տարի: Հետախուզված սահմաններում հանքավայրի գրանոդիորիտները և պլազիոգրանիտներն ունեն կայուն ֆիզիկամեխանիկական ցուցանիշներ և բավարարում են երեսպատման քարերին ներկայացվող տեխնիկական պահանջներին /ГОСТ 9479-98/:

Շրջանի գլխավոր ջրային երակը Դ-երեղ գետն է, որի ձախ Լալվար և Սեղվի վտակները հոսում են հանքավայրի հարևանությամբ: Հետախուզված սահմաններում ջրատար հորիզոններ չեն հայտնաբերվել: Շնորհիվ տեղանքի բարենպաստ ռելիեֆի, հանքավայրի շահագործումը չի պահանջում հատուկ ջրահեռացման միջոցառումներ:

Ժամանակակից առաջացումները հանքավայրի սահմաններում ունեն համատարած տարածում, հզորությունը տատանվում է 0.1-ից-0.4մ սահմաններում, միջինը կազմելով 0.2մ:

*Արման Օձնեցի ՍՊԸ-ի տնօրենի կողմից*



Մակաբացման ապարները, որոնք ներկայացված են հողմնահարված, խիստ ճեղքավորված գրանոդիորիտների ապարներով և հողային շերտով, միջին հզորությունները համապատասխանաբար կազմում են՝ հողաբուսական շերտ-0.21մ, փուշտա-0.7մ:

Օգտակար հանածոյի միջին հզորությունը գրանոդիորիտների տեղամասում կազմում է 30.8մ, իսկ պլազիոգրանիտներինը՝ 24.0մ: Օգտակար հաստվածքի ապարները ներկայացված են մանր և միջին խոշորության լիաբյուրեղային, հոծ կառուցվածքով կարծր ապարներով, որոնց շահագործումը հնարավոր է կատարել բացառելով պայթուցիկ նյութերի օգտագործումը:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները պայմանավորում են հանքավայրի մշակումը կատարել բաց լեռնային աշխատանքներով: Օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է 2,5մ բարձրությամբ աստիճաններով: Վերջնական եզրագծում աստիճանները մարվում են 5մ բարձրությամբ, որոնց միջև թողնվում է 2,0մ լայնությամբ բերնա: Նշված պայմաններով կառուցված բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարություն – 135մ,
- առավելագույն լայնություն – 130մ,
- մշակման խորություն – 50մ,
- օտարման մակերես – 1.23հա,
- մակաբացման միջին գործակից՝ 0,04մ<sup>3</sup>/մ<sup>3</sup>:

Հորիզոնների բացումն իրականացվելու է բացահանքի հարավ-արևելյան մասից՝ մոտեցող ճանապարհից հորիզոնական կտրող կիսախրամների անցկացմամբ, որոնց լայնությունը հիմքի մասում ընդունված է 6-7մ: Խրամների անցումը բերվածքային և հողմնահարված ապարներում կատարվում է բուլդոզերով, իսկ գրանիտոիդների մեջ հորատասեպային աշխատանքներով՝ կիրառելով բուլդոզեր-ավտոմոբիլային կոմունկ-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիր:

Հանքաշերտի մշակման ժամանակ ընդունվել է ընդերկայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխելով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- Աշխատանքային աստիճանի բարձրություն – 2.5մ, մարվում են 5մ բարձրությամբ, (2 աստիճանի միացմամբ),
- Աշխատանքային աստիճանի թեքություն – 90<sup>0</sup>,
- Մարված մակաբացման աստիճանի թեքությունը – 45<sup>0</sup>,
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ:

Միաբարի անջատումը զանգվածից նախատեսվում է հորատասեպային եղանակով, սեպանցքներում տեղադրվող հիդրավլիկ սեպերի օգնությամբ: Ստացված բլոկները սպառողի տրանսպորտի մեջ բարձելու համար օգտագործվելու է 16տ բեռնաբարձությամբ ավտոկոմունկ: Գրանիտոիդների բլոկները տեղափոխվելու են բացահանքից 5կմ հեռավորության վրա գտնվող ջարդման-մշակման արտադրամաս:

Արդյունահանման աշխատանքների ժամանակ առաջանում են օգտակար հանածոյի կորուստներ, որոնք (ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից) պաշտպանիչ բնամասերի տեսքով հիմնականում մնում են վերջնական եզրագծի կողերում: Այդ կորուստները կազմում են 29900մ<sup>3</sup> կամ 9.8%:

Լցակույտ առաջացնող ապարները ներկայացված են՝ 3360մ<sup>3</sup> հողաբուսական շերտով, 7840մ<sup>3</sup> փուշտա շերտի ապարներով և 176075մ<sup>3</sup> թափոններով: Վերջիններս բուլդոզեր-փխրեցուցիչի օգնությամբ տեղափոխվելու են ժամանակավոր արտաքին լցակույտ և տեղադրվում բացահանքի արևմտյան և հյուսիսային կողերի երկարությամբ առանձին: Արևմտյան լցակույտի հիմքի մակերեսը 0.24հա է, իսկ հյուսիսային լցակույտի հիմքի մակերեսը՝ 0.22հա: Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները տեղադրվելու են բացահանքի արևելյան մասում, 1070մ միջ ունեցող հորիզոնից ձևավորվող արտաքին լցակույտում: Այդ թափոնների լցակույտի հարթակը զբաղեցնում է 0.8հա մակերես:

1050մ միջ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց նախատեսվում է հյուսիսային և արևմտյան արտաքին լցակույտերի ապարների տեղափոխում ներբացահանքային տարածք և հարթեցում:

Աշխատանքային նախագծում ներկայացվել են բացահանքի շահագործման ընթացքում՝ դիզելային և բենզինային վառելիքով աշխատող սարքավորումներից ու մեքենաներից, բարձման և